



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, Ապրիլ 22, կը կոչուի Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան այս առիթով պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագի արարողութեան:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Մայր Հռիփսիմէ Սասունեանի եւ Ոսկեբերան Արզումանեանի մահուանց քառասունքին առիթով: Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամին մէջ պիտի անդրադառնայ անոնց եկեղեցանուէր եւ ազգանուէր ծառայութիւններուն ու վաստակին:

Մայր Հռիփսիմէ տասնամեակներ շարունակ նուիրեալ ծառայութիւն մատուցած է մեր ժողովուրդին՝ Պոլսոյ Գալֆայեան որբանոցին ճամբով, նաեւ քանի մը տարի վարած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճիպէլի (Լիբանան) որբանոցին տնօրէնութիւնը:

Իսկ Ոսկեբերան Արզումանեան մեծ վաստակ ունի յատկապէս Լիբանանի մեր Թեմի ուսումնական ու կրթական կալուածին, Լիբանանի պետական համալսարանական շրջանակին ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որուն Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ էր, նաեւ ստանձնած է բազմաթիւ այլ պատասխանատուութիւններ:

Յընթացս Ս. Պատարագի, Տէր Ողորմեայի աղօթք պիտի բարձրացուի ի յիշատակ այն անմեղ զոհերուն, որոնք այս շաբաթասկիզբին ինկան Վըրճինիա Նահանգի համալսարանին մէջ, հոգեկան հիւանդութեւ տառապող երիտասարդ ուսանողի մը ծանօթ արարքին հետեւանքով:

PRELATE TO PRESIDE OVER MASS AND
SPECIAL PRAYER SERVICES AT HOLY CROSS CATHEDRAL

Sunday, April 22nd is Green Sunday, also known as the Sunday of the World Church. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at Holy Cross Cathedral in Montebello. During requiem services, special prayers will be offered on the 40th day of the passing of Mother Hripsime Sassounian and Mr. Vosgeperan Arzoumanian.

On the same day, special prayers will be offered in all Prelacy churches for the victims of the massacre at Virginia Tech which occurred on Monday, April 16.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՓՐՈՖ. ԼԵՒՈՆ ԽԱՉԵՐԵԱՆԻ ԵՒ ՃԻՄ ԱԼՃԵԱՆԻ ՄԱՅՈՒՄՆՑ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Անցնող շաբթուան ընթացքին, մեր Թեմը կորսնցուց երկու վաստակաւոր անձնաւորութիւններ՝ բազմավաստակ մտաւորական, պատմագետ ու լեզուաբան Փրոֆ. Լեւոն Խաչերեանն ու Լինսի Յիմնարկի Նախագահ ու վարչական խորհուրդի ատենապետ Ճիմ Ալճեանը:

Փրոֆ. Լեւոն Խաչերեանի մահուան առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը ցաւակցութիւն յայտնեցին հանգուցեալի հարազատներուն եւ ընտանեկան պարաքաներուն:

Փրոֆ. Լ. Խաչերեանի միտքի ու գրիչի արգասիքներէն մեծ վաստակ մը ժառանգ կը մնայ հայութեան՝ հայագիտութեան բազմաթիւ կալուածներուն մէջ: Զանգուցեալը Միացեալ Նահանգներ հաստատուելէն ի վեր սերտ գործակցութիւն մշակած էր Ազգային Առաջնորդարանիս հետ: Առաջնորդարանը հովանաւորած է անոր բազմաթիւ գիտաշխատութիւններուն հրատարակումը: Վերջինս էր Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց»ին ուսումնասիրութիւնը:

Փրոֆ. Խաչերեանի տան կարգի արարողութիւնը տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց դասուն:

Առաջնորդ Սրբազան հայրը այս առիթով դամբանական մը խօսեցաւ: Ան բարձր գնահատեց հանգուցեալին արժանիքներն ու վաստակը, հայ մշակոյթի եւ հայ լեզուի կալուածին մէջ: Փրոֆ. Խաչերեանի թաղման կարգը տեղի ունեցաւ յաջորդ օրը, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Ճիմ Ալճեանի մահուան տխուր առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինը, մեր վարժարաններն ու ժողովականութիւնը ցաւակցութիւն յայտնեցին Ալճեան ընտանիքին եւ հանգուցեալի հարազատներուն:

Ճիմ Ալճեան բարեսիրական երախտաշատ գործ կատարած է Լինսի հիմնարկին մէջ իր ստանձնած պատասխանատուութեանց ճամբով. այդ աշխատանքներուն շարքին է Թեմիս ազգային Վարժարաններուն կատարուած յատկացումները, որոնք անփոխարինելի դեր ունեցած են մեր ուսումնական կեանքի կարիքներուն յանձանձումին մէջ:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Ապրիլ 21-ին Beverly Hills-ի Good Shepherd Կաթողիկէ եկեղեցոյ մէջ: Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ արարողութեան եւ յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ու մեր Թեմին՝ պիտի փոխանցէ ցաւակցական իր խօսքը:

**PRELATE PARTICIPATES IN FUNERAL SERVICES FOR
PROF. LEVON KHACHERYAN AND JIM ALJIAN**

Over the past week, our Prelacy lost two prominent Armenians; Prof. Levon Khacheryan and Lincy Foundation President Jim Aljian.

The Prelate, along with the Prelacy Religious and Executive Councils, expressed their condolences to the families of the deceased.

The Prelate presided over the wake service for Prof. Khacheryan at St. Mary's Church in Glendale and paid tribute to the Professor's contributions to Armenian language and culture.

The Prelate will attend the funeral service for Jim Aljian on Saturday, April 21st, at the Good Shepherd Catholic Church in Beverly Hills where he will convey his sympathies on behalf of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, and our Prelacy.

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԳԵՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՐԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Ուրբաթ, Ապրիլ 20-ի առաւօտեան ժամը 9-ին, Լոս Անճելլոսի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 92-ամեակին նուիրուած ոգեկոչման ու յարգանքի յատուկ արարողութիւն մը, որ կազմակերպուած էր Հայ Դատի եւ քաղաքապետարանի կողմէ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, սոյն արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան: Արարողութեան ներկայ էին նաեւ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ՝ Տոքթ. Միսաք Պարսամեանն ու կազմի անդամ՝ տիար Վարուժան Կիլիւզեան, Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ, Հոլիվուտի Ռոզ եւ Ալեք Փիլիպոս Ազգ. Վարժարանի աշակերտներ եւ Լոս Անճելլոսի Հ.Ս.Ը.Մ.-ի սկաւտներ:

GENOCIDE COMMEMORATION AT LOS ANGELES CITY HALL

On the morning of Friday, April 20, a Genocide commemoration event had been organized at Los Angeles City Hall, where a resolution was passed recognizing the Genocide. The event was organized by the Los Angeles City Council and the Armenian National Committee. Very Rev. Fr. Muron Aznikian, accompanied by St. Garabed Church Board of Trustees chairman Dr. Misak Barsamian and board member Mr. Varouj Guluzian, attended the ceremony on behalf of the Prelate. Also in attendance were A.N.C. representatives, Rose and Alex Pilibos students, and Homenetmen Los Angeles chapter scouts.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.